Մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Ն. Գետաշեն գյուղի Ա. Եղիազարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (19 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույզի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում(Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
– բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
– անձը հաստատող փաստաթուղթ,
-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճեն (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են 2023 թվականի փետրվարի 7-ից մինչև փետրվարի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա **2023 թվականի փետրվարի 27-ին՝ ժամը 13:30-ին**, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղի Ա. Եղիազարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցում. հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, գ. Ներքին Գետաշեն, Վերին Դեմեր թաղամաս, 1-ին փողոց, շենք 1:
Տեղեկությունների համար զանգահարել՝ 077287444